ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«2» մայիսի 2017 թվականի N 77-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Արտավազդ Բաբկենի Մինասյանի (ծնված՝ 1987 թվականի հուլիսի 18-ին) և Անուշ Էդիկի Մինասյանի (ծնված՝ 1988 թվականի հունիսի 12-ին) դիմումը, որով ցանկություն են հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժի 5-րդ դաշտի թիվ 2-1/1 հասցեի հասարակական կառուցապատման հողամասում (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայական N 2818313, տրված անշարժ գույքի կադաստրի կողմից 2011 թվականի նոյեմբերի 1-ին, անհատ ձեռնարկատեր Արարատ Սողոմոնյանի կողմից 2017 թվականի ապրիլի 25-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը) ինքնակամ կառուցված շինությունը:

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և անհատ ձեռնարկատեր Արարատ Սողոմոնյանի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Արտավազդ Բաբկենի Մինասյանին և Անուշ Էդիկի Մինասյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 5-րդ դաշտի թիվ 2-1/1 հասցեի հասարակական կառուցապատման հողամասում 2017 թվականին ինքնակամ կառուցել է շինություն՝ 50,0 քառ.մետր արտաքին մակերեսով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ կետի բ) ենթակետի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Արտավազդ Բաբկենի Մինասյանին և Անուշ Էդիկի Մինասյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 5-րդ դաշտի թիվ 2-1/1 հասցեի հասարակական կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Արտավազդ Բաբկենի Մինասյանին և Անուշ Էդիկի Մինասյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 5-րդ դաշտի թիվ 2-1/1 հասցեի հասարակական կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շինությունը համարել օրինական և գույքին տրամադրել նոր հասցե՝ գյուղ Ջրվեժ, 5-րդ թաղամաս, թիվ 2-1/1:

2. Սահմանել, որ հողամասի սեփականատերերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228218 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 260 000 (երկու հարյուր վաթսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իրենց միջոցների հաշվին պետք է վճարեն կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Արամազդ Մարգարյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. մայիսի 2
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«2» մայիսի 2017 թվականի N 78-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Անդրանիկ Դավիթի Ղազարյանին տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժի 07-057-0330-0014 կադաստրային համարի հողակտորում տնտեսական շինության կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2. Էրիկ Սուրենի Սեյրանյանին տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժի Այգեգործական 4-րդ թաղամասի թիվ 6 այգետնակի վերակառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Արամազդ Մարգարյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. մայիսի 2
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«2» մայիսի 2017 թվականի N 79-Ա

ՄԱՅԻՍԻ 9-Ի ՀԱՂԹԱՆԱԿԻ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, մայիսի 9-ի հաղթանակի օրվան նվիրված միջոցառումներ կազմակերպելու նպատակով, ***որոշում եմ.***

1. Ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Թադևոսյան Սուսաննա – աշխատակազմի քարտուղար (նախագահ),

Մարգարյան Անահիտ - ֆինանսական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ,

Թադևոսյան Մարգարիտա - աշխատակազմի առաջին կարգի մասնագետ:

2. Հանձնարարել՝

1) աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Մարգարիտա Թադևոսյանին, մինչև 2017 թվականի մայիսի 4-ը կազմել և հանձնաժողովին ներկայացնել համայնքի Հայրենական Մեծ Պատերազմի մասնակիցների, համայնքից Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած) զինծառայողների (նրանց հավասարեցված անձաց) ընտանիքների ցուցակները.

2) ֆինանսական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Անահիտ Մարգարյանին՝ համաձայն ներկայացված ցուցակի յուրաքանչյուր ընտանիքի ցուցաբերել դրամական օգնություն՝ 30 000-ական (երեսուն հազարական) դրամ գումարի չափով, ծախսերն իրականացնելով բյուջեի համապատասխան հոդվածից:

3) հանձնաժողովին՝ կազմել միջոցառումների անցկացման ծրագիր և ավարտից հետո ներկայացնել իրականացված աշխատանքների հաշվետվություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. մայիսի 2
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«4» մայիսի 2017 թվականի N 80-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով Վարդան Ռուդիկի Վարդազարյանի ընտանիքի խնդրանքը, ***որոշում եմ.***

Վարդան Ռուդիկի Վարդազարյանի ընտանիքին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 19-րդ փողոցի թիվ 28 հասցեից բաժանված S_1=583,2 քառ.մետր մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ գյուղ Ջրվեժ, 19-րդ փողոց, թիվ 28, S_2=716,8 քառ.մետր մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ գյուղ Ջրվեժ, 19-րդ փողոց, թիվ 28/1:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. մայիսի 4
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«4» մայիսի 2017 թվականի N 81-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Գարեն Բագդանի Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 07-057-0339-0065 կադաստրային համարի՝ 2-րդ դաշտի 5-րդ հատվածի թիվ 53-55 հասցեի հողակտորում տալ մեկ հարկանի բնակելի տան կառուցման շինարարության թույլտվություն:

2. Պարտավորեցնել Գարեն Բագդանի Առաքելյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. մայիսի 4
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«4» մայիսի 2017 թվականի N 82-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Կարապետ Արամի Արզումանյանին տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժի 40-րդ փողոցի թիվ 26 հասցեի հողակտորում նկուղային հարկով երկհարկանի բնակելի տան կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2. Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Արամազդ Մարգարյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. մայիսի 4
գ. Ջրվեժ